

քով բժշկական օգնութեան կազմակերպելու գործում կան շատ պակասութիւններ, որոնց շնորհիւ այդ գիտական բարիքից օգտուում է տարաբախտաբար մարդկութեան շատ չնչին մասը, և բրօշուրները, ինչքան էլ լաւ գրած լինեն, չափազանց քիչ են փոխում այդ չարիքն առաջացնող պայմանները:

Ոս.

8. Մանակեան՝ «Գաւիր Անյաղրի խնդիրը նոր լուսարանութեամբ», մատենադրական հետազոտութիւն, Վաղարշապատ, 1904 թ., դինն է 20 կողմ:

Հին Հայաստանը տուել է այն ժամանակուայ քաղաքակիրթ մարդկութեան երկու նշանաւոր մտաւոր ոյժեր, որոնց անունը յայտնի էր իրանց հայրենիքից դուրս. դրանք են Պրոյերեսիոսը և Դաւիթ փիլիսոփան. այս վերջինը մեծ ծառայութիւն ունի արած աւելի իր հայրենիքին. ստեղծել իմաստասիրական բազմաթիւ ոճեր և բաւեր, փորձել Արիստոտելի մտքերը հայերէն արտայայտել, վերլուծել նրան,—դա մեծ քայլ էր մեր լեզուի զարգացման հարցում, թէկուզ «ժողովրդական» չլինէին այդ գրուածքները:

Այդ «Դաւիթի անձնաւորութիւնը մի առեղծուած է եղել թէ բիւզանդագէտների և թէ հայագէտ բանաստեղծների համար»: Յոյները Դաւիթին իրանց ազգից են ընդունել: Բանը այն է որ երկու Դաւիթ իմաստասէրների մասին տեղեկութիւններ կան. Դաւիթ Մեկնիչ և Դաւիթ Նորքացի, որոնք երկի տարբեր անձնաւորութիւններ են. այդ աւելի ևս խճճում է հարցը: Պարզել Դաւիթի և նրան վերագրած երկերի վերաբերեալ խընդիրները—ահա այդ ուսումնասիրութեան նպատակը: Պ. Մանուկեանը իր հետազոտութեան մէջ հետևեալ թեզիսներն է դրնում,

§ 1. Դաւիթի մասին նախկին հետազոտութիւնները.

§ 2. Ֆ. Կոնիքիլի կարծիքը.

§ 3. Բանասիրական ուսումնասիրութեան հր եղանակով կարելի է հաստատուն եզրակացութիւններ ստանալ.

§ 4. Մահմանք Իմաստասիրութեան, Պորփիրի Ներածութեան մեկնութիւնը և Արիստոտելի Վերլուծականքի մեկնութեան հատուածը միևնոյն հեղինակի Դաւիթ փիլիսոփայի գործ են, իսկ Արիստոտելի «Յաղագս մեկնութեան» և «Ստորոգութեանց» հայերէն մեկնութիւնները Դաւիթինը չեն.

§ 5. Դաւիթի իմաստասիրական երկերը.

§ 6. Չանազան կարծիքներ Դաւթի անձի մասին և դրանց քննութիւնը.

§ 7. Սահմանք Իմաստասիրութեան երկը և Ներածութեան ու Վերլուծականքի մեկնութիւնները թարգմանուած են յունարէնից.

§ 8. Նորպղատոնական Դաւիթ մեկնիչը Աղէքսանդրիայում ուսած Ջ-րդ դարի մատենագիր է.

§ 9. Նորպղատոնական Դաւիթ մեկնիչը քրիստոնեայ է.

§ 10. Նոննոսին վերագրուած առասպելաբանական մեկնութիւնների հեղինակը Դաւիթ մեկնիչը չէ.

Անկասկած գիտական աշխարհում ուշագրութիւն և գնահատութիւն կը գտնեն այդ եզրակացութիւնները: Ուրախակի է որ էջմիածնում կազմակերպուած է գիտութեամբ լուրջ պարապող մարդկանց մի փոքրիկ խումբ:

Na.

---

Գիօրի՝ «Հեռման եւ Դորոբէա», գերմաներէնից թարգմանեց Յարութիւն Պետրոսեան, Վաղարշապատ, 1904 թ., դիմն է 40 կողմ:

---

Գերմանացի հռչակաւոր մտածող-բանաստեղծի այս գրուածքը երբորդ անգամ է թարգմանուած հայերէն. այս վերջին թարգմանութիւնը տարբերուած է իր նախորդներից նրանով, որ կատարուած է տաղաչափութեամբ և ոչ արձակ: Թարգմանութեան կցուած են միջանի կարևոր ծանօթութիւններ, լեզուն բաւական սահուն է, չափը ներդաշնակ: Իբրև «առաջին փորձ» անպայման աջող է պ. Յարութիւն Պետրոսեանի այս թարգմանութիւնը:

Na.

---

«Զիււանու Բնարք», հատոր երկրորդ, Վաղարշապատ, 1904, դիմն է 50 կողմ:

---

Գրիչ անգամ «աշուղ» համեստ անուանը կապուած է եղել այդ աստիճան խոշոր յեղափոխիչ դեր, որքան այդ վիճակուեց Զիււանուն: Նրա անունը իրաւացի կերպով կապուած է մեր նորագոյն պատմութեան ամենահետաքրքիր էպոխայի հետ: Զիււանին հրապարակ եկաւ ճիշտ ժամանակին:

Ժողովրդական առաջնականգ աշուղներ մեզանում երբէք